ԱՇՈՏ ԳԱՐԵԳԻՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Սովետական պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: Կյանքից հեռացավ խոշորագույն գիտնական, կուսակցական և պետական նշանավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը:

Ա. Գ. Հովհաննիսյանը ծնվել է 1887 թվականի հունիսի 17-ին, Շուշի քաղաքում: Տարրական կրթությունն ստացել է Շուշիի ռեալական ուսումնարանում: 1906 թվականին մտնելով կոմունիստական կուսակցության շարքերը, Ա. Գ. Հովհաննիսյանը դառնում է աշխատավոր ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության համար պայքարող ակտիվ մարտիկներից մեկը: Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո Ա. Գ. Հովհաննիսյանը գտնվել է լուսավորության ժողովրդական կոմիսարի պատասխանատու պոստում՝ Հայաստանի առաջին սովետական կառավարության կազմում, իսկ

ապա ընտրվել Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար: Նա շատ ուժ ու եռանդ է նվիրել Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման գործին, վաստակել հանրապետության աշխատավորների սերն ու հարգանքը:

Ա. Գ. Հովհաննիսյանը կուսակցական ու պետական մեծ աշխատանքը զուգորդում էր բեղմնավոր գիտական գործունեության հետ: Պատմափիլիսոփայական փայլուն կրթությունը, համաշխարհային հայագիտության և ռուսական պատմագրության լավագույն ավանդույթների յուրացումը հանդիսացան այն հիմքը, որի վրա Ա. Գ. Հովհաննիսյանը ձևավորվեց որպես լայն պրոֆիլի հայագետ, դառնալով հայ իրականության մեջ առաջին պրոֆեսիոնալ մարքսիստ-պատմաբաններից մեկը:

Արտասովոր կերպով լայն է Ա. Գ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների դիապազոնը: Նրա գրչին են պատկանում ավելի քան 70 գիտական աշխատություններ, որոնք ժամանակագրական տեսակետից ընդգրկում են հայ ժողովրդի պատմության մի հսկայական շրջան՝ V դարից մինչև XX դարի սկզբները, իսկ թեմատիկ տեսակետից նվիրված են սոցիալ-տնտեսական հարաբերությունների, հասարակական ու քաղաքական մտքի պատմությանը, գրականագիտության կարևոր հարցերին: Ա. Գ. Հովհաննիսյանի հետազոտությունների առանցքը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի և նրա գաղափարախոսության պատմությունն է: Բազմահմուտ գիտնականը գիտականորեն հիմնավորել է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորումն ու զարգացումը: Այդ պրոբլեմի հետազոտությանը նա ձեռնամուխ էր եղել դեռևս դարասկզբին, երբ Իսրայել Օրիի մասին գերմաներեն լեզվով հրապարակած մենագրության համար նրան շնորհվեց փիլիսոփայության դոկտորի աստիճան: Հայ ազգային-ազատագրական շարժման նախորդ և հաջորդ փուլերը Ա. Գ. Հովհաննիսյանը ընդունության է առել «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» կապիտալ աշխատության և «Նալբանդյանը և նրա ժամանակը» ֆունդամենտալ հետազոտության մեջ:

Ա. Գ. Հովհաննիսյանը հայ պատմաբաններից առաջինն էր, որ ձեռնամուխ եղավ հեղափոխական շարժման և սովետական իշխանության համար աշխատավորության պայքարի պատմության կարևորագույն պրոբլեմների ուսումնասիրմանը: 20-ական թվականների հենց սկզբներին նա այդ թեմատիկայով հրապարակեց մի շարք աշխատություններ:

Ա. Գ. Հովհաննիսյանի աշխատությունները, որոնք աչքի են ընկնում վերլուծության խորությամբ, մտքի համարձակությամբ, ընդհանրացման լայնությամբ, իրավամբ, մտել են հայագիտության ոսկե ֆոնդը և արժանի համբավ բերել հեղինակին, նրան կանգնեցնելով հայ պատմագիտության խոշորագույն գործիչների շարքը:

Ա. Գ. Հովհաննիսյանը գիտության աշխի ընկնող կազմակերպիչ էր: Նա եղել է Երևանի պետական համալսարանի ստեղծողներից մեկը, տարիներ շարունակ հանդիսացել է ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի բաժնի վարիչ, նյութական կուլտուրայի պատմության պետական ակադեմիայի Մոսկվայի բաժանմունքի դիրեկտոր, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ: 1954 թվականից մինչև իր կյանքի վերջը Ա. Գ. Հովհաննիսյանն աշխատում էր Հայկա-

կան ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում, ղեկավարում հայ ժողովրդի նոր պատմության բաժինը:

Հասարակական-քաղաքական ու գիտական ակտիվ գործունեության համար Ա. Գ. Հովհաննիսյանը արժանացել է հայրենիքի բարձր պարգևին՝ Լենինի շքանշանի:

Ա. Գ. Հովհաննիսյանի, որպես գիտնականի և կոմունիստի, համար բնորոշ էին սկզբունքայնությունը, համոզման մեծ ուժը, իր և շրջապատի նկատմամբ բացառիկ պահանջկոտությունը, գիտելիքները մեծաթիվ աշակերտներին ու կոլեգաներին առատաձեռն հաղորդելու պատրաստակամությունը: Հենց այդպիսին էլ ժողովրդի հիշողության մեջ ընդմիշտ կմնա հիանալի կոմունիստ, մեծ գիտնական ու քաղաքացի Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի կերպարը:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ, Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Բ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ա. ՄԻԿՈՅԱՆ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆ, Գ. ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆՑ, Գ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Վ. ՇԱԽՆՈՎԻՉ, Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Ե. ԱՍՏԱՏՐՅԱՆ, Հ. ԹԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ, Լ. ՍԱՀԱԿՅԱՆ, Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Լ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, Ս. ՄԵՐԳԵԼՅԱՆ, Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ա. ԻՈՍԻՖՅԱՆ, Ս. ԲԱԿՈՒՆՑ, Ծ. ԱՂԱՅԱՆ, Մ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ, Մ. ՇԱՀԻՆՅԱՆ, Ջ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Կ. ԴԱՎԱԼԱՔՅԱՆ, Զ. ՆԱՐԻՄԱՆՈՎ, Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Ս. ԹԵՎՈՍՅԱՆ, Գ. ԴԱԼՈՅԱՆ, Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, Ա. ԿԱՐԻՆՅԱՆ, Ս. ԵՐԵՄՅԱՆ, Լ. ԽԱՉԻԿՅԱՆ, Բ. ՊԻՈՏՐՈՎՍԿԻ, Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Բ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ, Վ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, Ա. ԱԴՈՅԱՆ, Գ. ՄԵԼԻՔ-ԳՐԻԳՈՐՅԱՆ: